Դիմումներին կից պահանջվող փաստաթղթերի ցանկը

6. Վարձութային վկայական ստանալու համար հայտատուն ազգային մարմին է ներկայացնում՝

1) հայտադիմում (Ձև N 1).

2) հեղինակային իրավունքի վերաբերյալ հայտարարություն (ներառյալ ֆիլմի տարածման տեսակները և ժամանակացույցը) (Ձև N 2).

3) ֆիլմի դասակարգման և ձայնային ներկայացման վերաբերյալ հայտարարություն (Ձև N 3)

4) ֆիլմի կրկնօրինակման և (կամ) ենթագրման վերաբերյալ հայտարարություն (Ձև N 4):

7. Հայտին կցվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) իրավաբանական անձի պետական ռեգիստրի վկայականի պատճենը.

2) ֆիլմի տարածման համար հայտատուի լիցենզիան հաստատող փաստաթղթերի պատճենները (օտար լեզվով փաստաթղթերն ուղեկցվում են որակավորված թարգմանչի կողմից կատարված հայերեն թարգմանությամբ).

3) կինովարձույթի կամ հեռարձակման, կամ մալուխային տարածման համար նախատեսված ֆիլմերում օգտագործված երաժշտական ստեղծագործությունների մասին (կոմպոզիտոր, օգտագործված ստեղծագործության անվանումը, ֆիլմում ստեղծագործության տևողությունը) տեղեկատվություն.

4) մոնտաժային կամ տրամախոսական թերթեր (առկայության դեպքում), կից՝ ֆիլմի կարճ անոտացիան

5) ֆիլմի պատշաճ որակի պատճեն (DVD կամ Blu-Rey սկավառակ) նյութական կրիչի վրա (ներկայացվում է դիտման և հետագա պահպանման համար):